

“Ժողովուրդը զենք առած է: Պէտք
բաժնի քաղաքացիները ազգային պահա-
պան զինուորութեան պէս բան մը կազ-
մեցին բարեկարգութիւնն անվերջ պա-
հելու եւ սեփականութիւնները պաշտ-
պանելու համար: Գլխերին ալ պա-
հապան զինուորացի խումբեր կը պարտին
փողոցներուն մէջ:”

“Այս միջոցին լուր կուտան ինծի
թէ իշխանը բերքը գաղթը՝ ինքզինքը օս-
մանեան զօրաց պաշտպանութեանը ներ-
քեւ գրեթէ:”

Պէտքստէն յունվար 2/11 թուով
հետեւեալ լուրը կուտան հեռագրով:

“Քաղաքի էֆէնտին լուր տաւ հե-
ռագրով Բ. Դանէն, թէ կայսերական
կառավարութիւնը առանց զօրաւորու-
թեան կը զննան Սերիկայ ժողովրդեան
խնդրանքը՝ որ ընդհանուր ժողովին եւ
ծերականութեան թերմով յայտնվեցաւ: Բ.
Դանէն արդէն իր որոշումը Սերիկայէն
հաղորդեց, եւ միապետին ծանոց
որ իր ընտրութեանը վերաբերեալ կայսե-
րական պետութիւնը արգելադրեց պաշտ-
տօնատարներէն մէկուն հետ Պալատէն
պիտի խորհրդէ, ուր Սերիկայէն հիմա
կընտրէ: Իսկ առժամանակեայ կառու-
վարութեան գաղով՝ Բ. Դանէն հրա-
ման կընէ Սերիկայէն որ արժան եղած
միջոցները ձեռք առնուի՝ իր անուանով կա-
տարվելու համար:”

Սերիկայէն հեռագրական լուրին
տուած տեղեկութեանը համեմատ՝ ար-
քունի պաշտօնակալներէն զննապետ
Սուլթանպապա պէյը շարքի իրիկուն մայ-
րաքաղաքէն մեկնեցաւ Սերիկայէն ընա-
րութեան հրովարտակը տանելով:

Պէտքստէն զրկած վերջին լուրերը
կը ծանուցանեն թէ Սերիկայ նախորդ իշ-
խան Ալեքսանտրոս պէյը վերջապէս իր շը-
րաւարակները գրով առնելու եւ ընտանեօր
Պէտքստէն եկել է:

Իշխան Լաւրապիլը կը ծանուցա-
նէ թէ Սերիկայի ընդհանուր ազգային
ժողովը որոշում ըրել է որ ամեն տարի
Ս. Ստաւադանի ծննդեան տօնակնի-
շոցները դուստրվի. եւ ով որ այս ժողո-
վին ազատ եւ օրինաւոր կերպով յայտ-
նած կամքին դէմ կենայ՝ մատնիչ հայ-
րենեաց պիտի համարվի: Օրէնք մը չպի-
տի կրնայ հրատարակվիլ կամ փոփոխվի
առանց անոր հաւանութեանը: Յիշեալ
ժողովը իրաւունք ունի ազգին շահուցը
հակառակ երեւցած օրէնքները խափա-
նել տալու: Կառավարութիւնը չպիտի
կրնայ առանց նոր ժողովին հաճութեանը
փոխառութիւն ընել եւ ոչ քաղաքական
առաջարկութիւն մը ընել: Ժողովը պի-
տի կրնայ կառավարութեան պաշտօնեայ-
ները դատաստաններէն ձգել: 30 տա-
րուէն վեր եզոզ եւ բարի վարք ունեցող
ամեն Սերիկայի կրնայ ընդհանուր ժո-
ղովին անդամ ընտրվիլ:

Իշխան երեքշաբթի առտու մայրա-
քաղաքս լուր եկաւ հեռագրով, թէ երկ-
րորդ կարգի պոյսներէն Պ. Ալեքս. Բու-
ձա Սուլթանայի Օսթոտար ընտրվիլ է:

Պ. Ալեքս. Բուձա՝ Պիքա պէյին օ-
րովը Սալայի կառավարիչ էր, եւ միու-
թեան կողմնակիցներէն ըլլալուն համար՝
թիւրքոյ Պալատէն գալմաղամէն օրովը պաշ-
տօնէն հանվիլ էր:

Սալայի պէյին եկած վերջին լուրերը
կը ծանուցանեն թէ Դանուբեան իշխա-
նութեանց նոր կազմութեանը վերաբեր-

եալ դաշնադրութեան մէկ քանի յօդ-
ւածներուն վայցօր Սալայի կրեք
գալմաղամէններուն մէջ ծաղած անհամա-
ձայնութիւնը վերջացաւ, եւ անոնց մեկ-
նութեանը մասին ներք գալմաղամէնը
վերջապէս միտարանելով յայտարարու-
թիւն մը հրատարակեցին երեքին ստա-
րագրութեամբ:

Սահմանադրութեան իմաստին հա-
մեմատ Օսթոտար ընտրվիլու պայմաննե-
րն ունեցող ընտրելիներուն ցուցակը
չենվեցաւ, եւ ամսոյ վերջերը Օսթոտա-
րի ընտրութիւնը պիտի կատարվի:

Պայտերական հրամանաւ՝

Հարկի փաշան պատերազմական ա-
տենին անդամ անուանեցաւ:

Ազգային Բահման էֆէնտին Լաւրա-
պիլը գալմաղամ անուանեցաւ:

Տեսչութեան պաշտօնեայ վստախալ
Սահման փաշային Բահման Լաւրա-
պիլին Պէյ յօդուի անհաշիւ օտոն-
կան անուանեցաւ փոխանակ Մախիդ կա-
ռավարիչ անուանեալ Սուլթանպա փա-
շային:

ԱԶԳԱՅԻՆ

Իզմիլի Լաւրապիլը լուրերը
իւր 587 թուոյն մէջ՝ Իստուֆեան վը-
սեմաշուք Յովսէփ Չէլէպիլին եւ անոր ար-
ժանի լծակից Խարաւոսեմեան աղնու-
հի Յուլիանէ տիկնոջ Իզմիլի Զօրի-
սիմեան եւ Սարուպեան վարժարաննե-
րուն այցելութեան երթալը պատմելով,
աղնուաշուք Յուլիանէ տիկնոջ մէկ ա-
տենարանութիւնը կը հրատարակէ չը-
ռիփսիմեան վարժարանին աշակերտու-
հացն ուղղված՝ ի պատասխանի անոնց
իրենք ըրած շնորհակալութեան ուղղվածին:

Յիշեալ ատենարանութիւնը՝ եթէ
չիմք սխալիք՝ այս առաջին անգամն է որ
կը լսվի հայազգի տիկնոջ մը բերնէն. բայց
կը համարձակվիք ըսելու թէ մինչեւ հի-
մա ազգիս ուսումնականացը բերնէն լս-
ված ատենարանութիւններուն մէջ ալ
առաջին կարգը դասվելու արժանի է թէ
լեզուին յատկութեամբն ու գեղեցկու-
թեամբը, թէ ընտիր կարգաւարութեամբ
ըլ եւ թէ իմաստներուն ողջմտութեամբ
ըլն ու վսեմութեամբը, որոնք ուղիղ բա-
րոյականի, աստուածապաշտութեան,
ազգասիրութեան, բարեկրթութեան,
մէկ խօսքով՝ ճշմարիտ քաղաքակրթու-
թեան գրոշմը կը կրեն իրենց վրայ. եւ
այս ամենը լուսաւորեալ եւ կանոնաւոր
դաստիարակութեան, անխնայ ուսումնա-
սիրութեան եւ խորին հմտութեան մը
արդիւնք են: Իշխանի կըլլար ազգերնիս
թէ որ հայազգի օրիորդներուն դաստիա-
րակութեանը ընդհանրապէս այս կերպով
խնամ տարվի, եւ անոնց միտքն ու սիր-
տը պայպիսի օղջախոհ եւ վսեմ իմաստ-
ներով կրթվիլ:

Այս ըսածներնիս լիովին հաստա-
տելու համար եւ մանուաճը կենդանի
օրինակաւ մը ցուցնելու թէ հայոց ազ-
ջիկ դասերը՝ առանց օտարաց դռնէն
կրկնաւոր եւ կեղծ դաստիարակութիւն
մը մտաւարու եւ հայկական հոգին, լեզուն,
« երօնք վրայ տալու՝ կրնան օրինաւոր
եւ կատարեալ ազգային դաստիարակու-
թեամբ մը կրթվիլ, պարտք կը համա-
րենք ամբողջ հրատարակել Իստուֆե-
ան վսեմաշուք լծակիցներուն ըրած վե-
րջիշխալ այցելութեան պատմութիւնը
եւ մանաւանդ աղնուաշի Յուլիանէ

տիկնոջ խօսած դիպելի ճառին օրինա-
կը, որուն մէջ Իզմիլի Զօրիսիմեան
վարժարանին աշակերտութեան ուղղ-
ված գեղեցիկ խրատներն ընդհանուր ազ-
գիս օրիորդացն հաղորդվելու արժանի են:

“Սահմանադրութեան Յովսէփ
Չէլէպիլին ընկերութեամբ իւր արնուաշուք
լծակիցին, անցեալ շաբթու հաճեցաւ այ-
ցելութեան դալու Զօրիսիմեան եւ Սու-
րուպեան ազգային կրկին վարժարանաց քա-
ղաքիս, որոց բաւական բարեկրթութիւ-
նը եւ աշակերտաց ու աշակերտութեան
յառաջադէմ ընթացքը տեսնելով շատ
ուրախացաւ:”

Սեմաշուք այցելութեանը միտք մի աշ-
քէ անցուցին աշակերտաց հայերէն, գաղ-
ղերէն եւ ուրիշ օտար լեզուք աշխա-
տութիւններն: Զմանապէս աշակերտու-
հաց զանազան գրութիւնները եւ ազգ-
նեգործութեան վերաբերեալ գործքեր-
նին տեսնելով միծաղեց զօհական եւ ի-
րենց մտերիմ շնորհակալութիւնը յայտ-
նեցին յիշեալ կրկին վարժարանաց հո-
ղաբարձուացը, որ ներկայ կը դռնուէին
այս այցելութեանը:

Սարուպեան ուսումնարանին յա-
ռաջադէմ աշակերտները հայերէն եւ գաղ-
ղերէն ուղերձներ կարդացին. նմանա-
պէս Զօրիսիմեան վարժարանին առա-
ջին կարգի աշակերտութեանը հայերէն
երկու ուղերձ կարդացին ի բարեմաղթու-
թիւն եւ ի շնորհակալութիւն յիշեալ եւ
րեւելի այցելուաց, որոնք պարտաւրիս
յարմար արժանաւոր պատասխաններով
իրենց մտերիմ գօհուհակութիւնը յայտ-
նեցին:

Զօրիսիմեան վարժարանին աշակեր-
տութեանց երախտագիտ զղացուները ամե-
նէն ջերմեանդ եւ մտերիմ էին. քանզի
արդէն քանի մը օրէ ի վեր իմացած էին
ի հոգաբարձուաց, թէ Իստուֆեան մե-
ծաշուք Յուլիանէ տիկնոջ՝ Վաղդիկէն
սորվելու համար իրենց ունեցած մեծ փա-
փաքը լսելով, խոստացել է նոյն գեղե-
ցիկ եւ տիկնոջական լեզուին համար իւր
ծախիւքը դասատուութիւն մը հաստա-
տել յիշեալ վարժարանին մէջ:

Սահմանի Զօրիսիմեան վարժա-
րանին բոլոր աշակերտութեանց կողմանէ,
յառաջադէմ աշակերտութեան մը կարգա-
ցած մէկ ուղերձին օրինակը:

“Սեմաշուք Իստուֆեան տիկին,

“Զօրիսիմեան վարժարանին աշա-
կերտութեանց օրիորդ ուսուցիչութեամբ լեզ-
ուեցաւ այսօր, փասն պատուոյն գորը-
րիք մեզ այցելութեան դալով, ընկերու-
թեամբ Ձեր լծակիցն փսեմաշուք Յով-
սէփ Չէլէպիլին:

“Այս հոյակապ վարժարանը, որ Ձեր
մեծաշուք տալով անունը կը կրէ, անոր
առատաճեղճութեամբ շինուած ու լազ-
գին նախաճաճ ըլլալով, այս հոյակապ վար-
ժարանը կընեմ, բայցքը երախտապարտ
է Իստուֆեան գերդաստանին:

“Ձեր արնուաշուք իւր կամեցաւ այ-
սօր երախտադրութեան նմը իրաւունք
մը ստանալ Ձեր, մեր ծնողաց ու բոլոր ազ-
գիս զղացմանը վրայ, յանձնառու ըլլալով
ազգասիրաբար, զաղղերէն լեզուի հա-
մար վարժապետ կամ վարժապետուհի
մը կարգել տալու մեր դպրատանը մէջ,
ի կոտորումն մեծ փափաքանց սրտի
բոլոր աշակերտութեանց:

“Պատի հաճեցաւ որ, ով բարե-
գութ աղնու Տիկին, ընդունի մեր սրտ-
անի խորին շնորհակալութիւնը եւ մեր

ազգանքը զոր կրնանք՝ օրպէս զի նոյն մը-
տերիմ շնորհակալութիւննիս մատուցա-
նելը նաեւ Ձեր մեծապատիւ լծակիցն,
հանդերձ մեր ջերմեանդ բարեմաղթու-
թիւններով՝ զոր կառաքեմք յաղկինս
փասն քաղաքացիութեան եւ երկար կենաց
Ձեր՝ եւ Ձեր փսեմաշուք լծակիցին որ
քովերնիդ ներկայ է. նմանապէս փասն եր-
ջանկութեան ձեր դեւարոցը սիրուն
զաւակաց:”

Իստուֆեան աղնուախալ Յուլիա-
նէ տիկնոջ, որուն գորովագութ սրտին
վրայ մեծ ազգեցութիւն ըրին 150 աշու-
կեպետութեանց կողմանէ կրած այս ջերմե-
անդ բարեմաղթութիւնները եւ երախ-
տագիտ զղացմանց յայտարարութիւննե-
րը, հետեւեալ պատուական տանխաօ-
տութիւնը կարդաց ի պատասխանի յիշ-
եալ ուղերձին, որ խիստ բարի ներգործու-
թիւն ըրաւ բոլոր աշակերտութեանց վրայ:

“Միտք օրիորդք:

“Պարտի սրտիւ եւ շնորհակալու-
թեամբ կընդունիմ զՁեր մեծանդ բարե-
մաղթութիւնները զոր կրնէք փասն բարո-
րութեան իմ գերդաստանիս:

“Սերիկ ի հոգաբարձուաց՝ զաղղե-
րէն լեզուին ուսման համար ձեր ունե-
ցած մեծ փափաքը, որ շիտալը գովու-
թեան արժանի է, պարտք համարեցի ինձ,
ձեռքէս եկածին չափ նպաստամատոյց
ըլլալ ձեր բարեկրթութեան կատարելու
գործութեանը, յիշեալ լեզուին համար
այս վարժարանին մէջ իմ ծախիւքս
դասատու մը կարգել տալու յանձնառու
ըլլալով:

“Քաղաքէն ինձ, իմ սիրելի տալոյձ՝
Պատանդեան մեծաշուք Զօրիսիմեան տիկ-
նոջ անուամբ կոտորեցաւ վարժարանին
յառաջադէմութեանը օգնական ըլլալ. եւ
շատ ուրախ եմ անոր ներկայ ընդհանուր
բարեկարգութիւնը եւ յառաջադէմ ըն-
թացքը տեսնելով. որուն համար իմ յա-
տուկ շնորհակալութիւնս կը մատուցանեմ
ձեր վարժարանին յարգոյ եւ ուսումնա-
կան հոգաբարձուաց:

“Միտք աշակերտութեանց. հաճու-
թեամբ սրտի կընդունիմ թէ իմ լծակ-
ցիս եւ թէ իմ կողմանէ ձեր երախտագի-
տութեան յայտարարութիւնը փասն Իստ-
ուֆեան գերդաստանին. բայց ոչ իբրեւ
հարկ մը որ կը վերաբերի մեր ըրած ազ-
գասիրական տկար բարեկրթութեանը,
այլ իբրեւ ապացոյց ձեր սրտին աղնու ըզ-
գացմանը:

“Յաճախ պիտի գտնվի զանա-
լու, եթէ խիմ ձեր բարեխախտեմ եւ անդ-
եւն օրրատ օրէ աւելիալ թէ իմ մասին հայ-
երէն եւ զաղղերէն ուսմանց եւ թէ ազգ-
նեգործութեան վերաբերեալ զանազան
օգտակար արհեստից մէջ:

“Սերիկ ըսի թէ գովութեան արժա-
նի է ձեր փափաքը փասն ուսման զաղղե-
րէն լեզուին. բայց մի կարծեք, սիրելի
աշակերտութեանց, թէ միայն զաղղերէն
գիտնալով եւ եւրոպացաց ամեն սովո-
րութեանցը անխորաբար հետեւելով՝ օ-
րիորդ մը բարեկրթ կը համարուի եւ եր-
ջանիկ լիլլայ: Ի՛նչ, ամենեւին այնպէս չէ.
այլ ընդհանրապէս խիստ դժուար կըլլայ
օրիորդ մը, եթէ եւրոպական սովորու-
թեանց մէջ իւր հայկական ընտրութիւն մը
չեն չընդունելով, համեստութեան եւ
բարի վարուց դէմ կըստները չմերժե-
այս խիստ դժուար կըլլայ եթէ բարոյա-
կանութեան դէմ եղած գիրքերը կար-
դայ, եթէ քիչ մը զաղղերէն գիտնալուն

Համար ինքնակրթութիւնը իւր ծնողքէն եւ իւր մեծերէն աւելի խելացի կարծելով՝ անոնց խորատու ակամջ չղկէ. եւ այլն: Պատի ներքեւք ինձ, սիրելի օրիորդք, որ ձեր ունեւոր պատուելի վարժապետաց եւ վարժապետական հասարակութեան անդամ եւ անհատ ջանքը հրաւիրեմ բարի վարժաց եւ բարոյականութեան սկզբանց վրայ, որ ձեր ամեն ուսմանց հիմունքը պէտք է որ ըլլայ: Համաստութիւնը՝ որ մեր կանաչի սեռին եւ մանաւանդ ազգային օրիորդաց վաղեմի պարծանքն է, աշխատեցէք հաստատուն պահելու միշտ. քանզի օրիորդի մը զխաւոր ու ամենէն մեծագին զարդը՝ պէտք է որ համաստութիւնը ըլլայ:

«Դատուրախ եմ տեսնելով, որ ձեր կրօնական ուսմանց հաստատութեան համար պատկանելի գիտնական քահանայ մը կարգեալ է. արժանապատիւ տէր Սարգսիս Սանահյեան կրնամ, որուն կրօնական քննադատութեան վարժապետութիւններէն եւ բարոյական պատուական խորաններէն ջանացէք օգուտ քաղելու. որոնք անշուշտ ձեր մտաց կարողութեանը յարմար մեկնութիւններով կը բացատրեն ձեզ: Թող խորին տպաւորվին ձեր սրբանից մէջ բարեպաշտութիւնը եւ կրօնասիրութիւնը. քանզի սկիզբն իմաստութեան կրկնելու հետեւն է, առանց որոյ չեք երջանկութիւն աշխարհիս մէջ»:

Աւելորդ կը համարեմ զտուրքութիւնը: Եւսուցիան վեճաբար Յովսէփ Չեչեպին յիշեալ կրկին վարժարաններէն մեկնելու ժամանակը, զրոյսական առատութեանը վրայ ինքնակրթութեան վարժապետութիւնը, վարժապետութիւնը եւ անտեսները»:

Աւելորդ

Անցեալ տարւոյն սկիզբները լրագիրս համաստութիւնը յիշեալ էր Անայ Ապուշին գիւղի բարեպաշտ հայ ժողովրդեան ցոյց տուած ուսումնասիրական գովելի ջանքը, որով բարձրագոյն ընկերութիւն մը մէջերէն կազմեր ու իրենց գեղին դպրոցը բարեկարգելու ձեռք գործէին:

Այս օրերս զիր առինք նոյն Ապուշին գիւղէն որ յիշեալ ընկերութիւնը ընդ բարեկամ պաշտպանութեամբ Անայ գիւղապատիւ Սրբազան առաջնորդին եւ ընդ նախագահութեամբ Պէկիան յարգապատիւ Սուքիաս աղային՝ դպրոցին բարեկարգութեան ու օր ըստ օրէ յառաջադիմութեանը համար պէտք եղած հոգի ու խնամքը անձանձիր շարունակելով՝ իր աշխատութեան քաղցր պտուղները տեսնել սկսեցին:

Անցեալ նոյեմբերի 9ին օրը դպրոցին աշակերտները ընկերով, բաւական յառաջադիմութիւն ցոյց տուերէն քրիստոնէական վարժապետութեան, սուրբ զրոյց պատմութեան, հայերէն քերականութեան, թուարանութեան, աշխարհագրութեան, գաղղերէնի, վայելաչափութեան եւ ձայնաւորի մէջ: Բնկերութեան յարգի անդամները եւ բոլոր հանգիստանքը զմայելով՝ միաձայն շնորհակալ եղեր են դպրոցին առաջին պատմութեան վարժապետին, որ անխնայ փութով եւ անձնանուիրութեամբ իր պաշտօնը կատարելով՝ ընդ ժամանակի մէջ այսչափ զոհաբերելէ արդիւնք ցուցնելու կարող եղեր է:

Այս լուրը տուող նամակը կը ծանուցանէ նաեւ թէ ընկերութեան նախագահ եւ գանձապետ վերայիշեալ յար-

գապատիւ Սուքիաս աղան այս օրերս դործի պատճառաւ Ս. Պօլին դպրոց պարտադրելով, ընկերութեան նախագահութեանն ու գանձապետութեանն հրաժարել է իր արտօնութիւնն սրտի համայն անդամաց ընկերութեան, եւ անոր տեղ ընկերութեան նախագահ ընտրվեր է Պէկիան յարգաւմեծար Արաքսի աղան. գանձապետութեան պաշտօնն ալ Տէր Պօղոսեան յարգի Արիստակէս աղային յանձնարել է:

Ամանակը թէ մայրաքաղաքս դրանով քանի մը Ապուշեցի ուսումնասիր յարգի աղաներ՝ վերայիշեալ ընկերութեան լուրն ստանալով զգացած զօհութիւններն յայտնելու համար մէջերէն ստորագրութիւն բացեր՝ եւ 16 հազար ղուրուշ գումար մը հաւաքելով վերայիշեալ դպրոցին շնորհեր են:

Ապուշի բարեպաշտ բնակչաց այս ուսումնասիրական եւ ազգասիրական աշխատանքներն ուրիշ շատ տեղերու օրինակ ըլլալու արժանի են:

Տրապիզոնէ հեռու եւլ նամակը կը գրեն մեզ:

Արժանապարզ հրատարակել Սանահյեանի լրագրոյն:

Ինչպէս որ շատ անգամ պատուական լրագրոյ մէջ հրատարակելով Առաւելորդապատիւ ազգիս վարժապետաց հարցաքննութիւններն՝ զմեզ կ'ուրախացընէինք, ահա այսօր Ձեր արժանապարգեւութեանը աւետիս մը տալով ազգասիրական ոգով՝ կ'ուրախացընեմք զՁեզ ընդ հանուր ազգայնոցս հետ, որ ամայս 21 ին տեղոյս Սուրբ Առաւելորդեան վարժարանիս ուսումնական մանկանց վեցամեակայ հարցաքննութեան հանդէսը կատարուեցաւ, ուր ներկայ գտնուեցան վարժարանիս մեծ արահին մէջ ժողովուած՝ տեղւոյս արժանաւոր փոխանորդ Տ. Պարտապետ շնորհալի վարժապետ զօնամիտ սուրբ հայրն մեր հանգիստ հոգեւորական գաւուն, քաղաքիս յարգի հոգաբարձութեան եւ ժողովրդեան մեծախումբ բաղմունքները, ուր եւ նուազատեսնելի պատմութիւնները պատիւ ունեցայ այնքան բաղմունքներէն հարց ու փորձ ընելու ազգիս դեռարդ ուսումնական մանկանցը, որոնք ուրախացողից գտնուեցան եւ զոհքին յարգի հոգաբարձութեանն ու բոլոր ազգասէր հանգիստանները՝ յառաջադիմութեանը քերականական ու թմասանց եւ համաձայնութեան, բնական աշխարհագրութեան, քրիստոնէական վարժապետութեան, ազգային պատմութեան, թուարանութեան եւ հասարակ վարժութեանց մէջ: Այս աղբօրուս հանգիստ մեծ ուրախութիւն պատճառեց՝ պարծանք ըլլալով բոլոր Առաւելորդեան ազգիս, մանաւանդ քաղաքիս քրիստոնէացի որոնք դեռ աւետած չեն այսպիսի ազգային հանգիստ մը: Բնութիւնը հիշող ժամ տեսեց, որուն վերջը վարժապետական գաւառաւ պատուելի Յարութիւն վարժապետին խղճանէ դպրոցիս յառաջադիմութեանը համար զեղեցիկ քաջաբերական խանձաւ մը կարգացուելէ ետքը, ազգասէր փոխանորդ հայրն մեր ջնքնուանք բարեմաղթութիւններով իւր զօհութիւնը յայտնեց եւ հայրական օրհնութիւններով հանդէսը կնքեց: Բոլոր հանգիստաններէն զօհարտով մեկնեցան շնորհակալ ըլլալով վարժարանիս հոգաբարձու բաղմունքներէն Արքեպիսկոպոս ազգային անձնա-

նրէր հոգաւորութիւններ, որ ազգասիրական նախադրով ազգիս մանկանց ուսումնական զարգացմանը կաշխատին եւ իր քրտնաթոր արդիւնքը ահա շնորհակալութեամբ պարտադրեցաւ ազգային բաղմունքներէն: Ար խնդրեց արդոյ հրատարակել որ մեր այս զօհութիւնը պատուական լրագրոյց միջոցաւ հրատարակելու շնորհներ:

Արով մեամ եւ այլն:

Տրապիզոն
27 դեկտ. 1858

Խաչատուր
Լ. Իշխան:

ԽՅԱԾՆ ԼՈՒՐԵՐ

Այս շաբթու Եւրոպայէն եկած յուսանելի լուրերը փոխադրութիւն ազգերով մայրաքաղաքիս վաճառականաց արտինձատակներուն գինը նորէն իջնալ սկսաւ:

— Անցեալ հինգշաբթի օրը օգոստոսական Խնքնակալ Թոփհանէի կայսերական Բեօշքը քնաց, ուր պատկերով պաշտօնեայ եւ Թնդանօմարանի վերատեսուէ վեմամիայլ Բիշա փաշան ծաշ մը տուաւ Սորին կայսերական վեհապառնութեան:

— Թեհրանի անդղիական գեւան Պ. Սըրիֆ՝ որ անցեալները մայրաքաղաքս եկած էր, անցեալ շաբթշաբթի օրը պատիւ ունեցաւ օգոստոսական Խնքնակալին ներկայանալու եւ նոյն օրը մայրաքաղաքէս ծամբայ ելաւ Եւրոպա կրթարու համար:

— Մայրաքաղաքիս յունաց նախկին պատրիարք Պատանդիոս արք եպիսկոպոս՝ որ 90 տարեկան ծերունի մընէր, երկուշաբթի օրը փութանելով՝ երեքշաբթի օրը յուրաքանչեւութիւնը կատարվեցաւ մեծահանգիստ արարողութեամբ: Հանգուցեալ ծերունի պատրիարքը Հեյկալի կողմէն մէջ եղած յունաց մեծ ձեմարանին հիմնադիրն ըլլալով՝ մեծ յարգ տուցած էր յունաց ազգին առջեւ:

— Անցեալ շաբթու մայրաքաղաքիս նեղուցին անցնելով Սիմօնիական ծով գացող Սիմոն անուն ուսանող պատերազմական նաւը Չանաք Գալէի նեղուցին բերանը Տար Պուռուն բաղած տեղը ցամաքը նստրէ, քայց ուրիշ շողեւաններ օգնութեան հասնելով՝ յաջողեցին զանկալ ազատելու:

— Դանուբին Բիւսթինէ շինվելիք երկաթուղին վերատեսուէն ու ճարտարապետներն այս շաբթու Ատուա պիտի երթան շինութեան դործերն սկսելու:

— Մայրաքաղաքիս Բախոյ՝ Օսման լրագիրն հեռուեալ կերպով կը պատմէ մայրաքաղաքիս լատինացեաց արք եպիսկոպոս Սոմանիօր Պրուսիոյն ըրած այցելութիւնը մեր եւ յունաց սրբազան պատրիարքներուն:

«Ճանչնալով վեհափառ Խնքնակալին բարեբար գիտաւորութիւնները որուն հանապազօրեայ ջանքն ապրտանին էր ամեն կարգի հպատակներուն անխախտ բարեկարգութիւն, խաղաղութիւն եւ բարօրութիւն հայթայթել, Ս. Պօլոյ առաքելական փոխանորդ գերապատիւ կոմս Պրուսիոյ արք եպիսկոպոսը լատինացեաց աթոռը նստած օրէն՝ այս վեմ եւ վեհանախական դիտաւորութիւններուն համաձայն՝ միտքը դրաւ բարեկամական նոր յորատելութիւններ հաստատել ուրիշ քրիստոնէայ ազգաց հոգեւոր գլուխներուն հետ: Այս համար տարւոյն նորագութեան առթիւ Յունաց եւ Հայոց

պատրիարքներուն զնաց իր սիրոյ յարգանքն ու շնորհաւորութիւնը մատուցանելու:

«Առաջին այցելութիւնը ըրաւ Յունաց պատրիարքարանը: Յունաց սրբազան պատրիարքը կատարեալ քաղաքականութեամբ ընդունեց լատինացեաց Ս. արք եպիսկոպոսը՝ ի ներկայութեան ինը բարձրատիման կեղեցեականներու, եւ իմացուց թէ Այսոյ այս ըրած այցելութիւնը մեծ պատիւ կը համարէր. նոյնը կրկնելին նաեւ միւս բարձրատիման կեղեցեականները:

«Սոմանիօր Պրուսիոյ յունաց Ս. Պատրիարքին ներկայացուց իր հետքը անջող լատին կեղեցեականները՝ որոնք այս տեսութեան ներկայ գտնուելու զօհութեանը մասնակից էին:

«Տեսութիւնը վնասելէն ետեւ, գերապատիւ առաքելական փոխանորդը Պուռն դարձաւ Հայոց պատրիարքարանը քնաց: Պատրիարքարանին դրանը մէջ բաղձաթիւ ծայրադոյն վարժապետներ զնեք գիմաւորելով, քաղաքավարութեամբ վեր հանեցին մեծ դահլիճը ուր Սրբազան Տ. Պէտրոս նորնաիր պատրիարքը գերեց կրօնասիր: Բնութեանը թիւնն ու խօսակցութիւնը միանգամայն սիրալիր եղաւ, որոյ մէջ այլ եւայլնի թող վրայ խօսք ըլլալէն զատ՝ մայրաքաղաքիս զանազան հեռաւոր թաղերուն իրարու հետ հաղորդակցութիւնը դիւրացնելու համար կայսերական կառավարութեան ձեռք տաւած միջոցներն ալ գովութեամբ յիշվեցան:

«Սոմանիօր Պրուսիոյ Հայոց պատրիարքարանէն ելելէն ետքը, անոր մօտը Վաթնութեան Բոյրերուն բացած աղջկանց դպրոցը քնաց, ուր աշակերտուհիները հայերէն ու դաղղերէն լեզուով իրենց շնորհակալութիւնը յայտնեցին իր այս ըրած յանկարծախան այցելութեանը համար»:

Անցեալ օրերս թիւ Պէտրոսի մէջ մեծահանգիստ յուրաքանչեւութեան մը տխուր պաշտօնը կատարվեցաւ:

Առաջվերական մեծապատիւ Արաքսի Վերայի գուստը՝ աղնուած ի Քրայի օրիորդը՝ երկար ժամանակեայ անբուժելի հիւանդութեամբ մը հինգշաբթի գիշեր առ Աստուած փոխեցաւ երեսնամեայ ծաղիկ հասակին մէջ՝ ի խոր սուգ տրտմութեան ընկղմելով: Այս հիւանդանոց աղնուատ հմեւ եւ բարեհամար գերապատիւ:

Յուրաքանչեւութեան հանգիստին ներկայ էին համակական հայոց բոլոր կեղեցեական գլուխները եւ ազգիս երեսնեաց մեծագոյն մասը:

Հետեւ նամակը որ վեհափառ Տ. Ս. Սատթեոս Սրբազանդոյն Վաթնուցիոյն զբաւոր պատուական աշխատասիրութեանցը վրայ երախտագէտ հոգով զրկած տեղեկութիւններ կը պարունակէ, ուսումնական բարեկամ մը խրկած է մեզ հրատարակելու:

Արժանապարզ խմբագիր Սանահյեան լրագրոյն:

Արդի մը երախտասիրին երախտեցն ու արգիւցը ծանօտեց եւ զանի գովութեամբ հոգաւոր ըմբռնեալ եւ բարեպաշտ օրիորդ՝ ամեն ազգաւոր մարդու անժխտելի պարագանութիւնն ըլլալով, եւ ալ այլոց հրապարակական եւ առանձնական գրութիւններէն շարժեալ յորդորեցայ մեզ

1859
1924
35

